Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԹԻԿՈՒՆՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները (այսուհետ՝ Կողմեր),

ղեկավարվելով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության, Անկախ Պետությունների Համագործակցության կանոնադրության, Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տարածքներում հակամարտությունների կանխման և կարգավորման՝ Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարների խորհրդի՝ 1996 թվականի հունվարի 19-ի որոշմամբ ընդունված հայեցակարգի, Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարների խորհրդի՝ 1996 թվականի հունվարի 19-ի որոշմամբ հաստատված՝ Անկախ Պետությունների Համագործակցությունում խաղաղության պահպանման հավաքական ուժերի մասին կանոնադրության, Անկախ Պետությունների Համագործակցությունում զինվորական դիտորդների խմբի և խաղաղության պահպանման կոլեկտիվ ուժերի համալրման, կառուցվածքի, նյութատեխնիկական և ֆինանսական ապահովման մասին արձանագրության նպատակներով, սկզբունքներով և դրույթներով,

համագործակցությունը ընդունելով հակամարտությունների կանխման և կարգավորման բնագավառում որպես կարևորագույն գործոններից մեկը Համագործակցության մասնակից պետություններում խաղաղության և կայունության պաշտպանության գործում և հաստատելով խաղաղարարության բնագավառում գործնական համագործակցության իրենց պատրաստակամությունը,

նպատակ ունենալով հաստատել Անկախ Պետությունների Համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) մասնակից պետությունների տարածքներում խաղաղության պահպանման գործողությունների անցկացման ժամանակ Անկախ Պետությունների Համագործակցությունում խաղաղության պահպանման հավաքական ուժերի (այսուհետ՝ ԽՊՀՈՒ) գործունեության և անձնակազմի ֆինանսական, տեխնիկական և թիկունքային ապահովման կարգը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակների համար կիրառվող տերմինները նշանակում են.

ԽՊՀՈՒ-ի գործունեության և անձնակազմի տեխնիկական ու թիկունքային ապահովում - ԽՊՀՈՒ-ն մարտական պատրաստականության վիճակում պահելուն, նրանց՝ առաջադրված խնդիրներն ըստ նշանակության լուծելու համար բարենպաստ պայմանների ստեղծմանն ուղղված միջոցառումների համալիր, որը ներառում է զորամասերի և թիկունքի ու տեխնիկական ապահովման հաստատությունների տեղաշարժը և տեղաբաշխումը, սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործումը, տարհանումը և նորոգումը, ըստ թիկունքի ծառայությունների՝

տեխնիկական ապահովումը, նյութական, տրանսպորտային, ինժեներական-օդակայանային, օդակայանային-տեխնիկական, բժշկական, առևտրակենցաղային ապահովումը.

ԽՊՀՈՒ-ի գործունեության և անձնակազմի ֆինանսական ապահովում - զորքերի (ուժերի) դրամական միջոցների պահանջմունքի ժամանակին և լրիվ ապահովման նպատակով անցկացվող միջոցառումների համալիր, որը ներառում է ֆինանսական պլանավորումը և ֆինանսավորումը, դրամական միջոցներն ստանալը, պահելը, խնայողական և նպատակային օգտագործումը, ֆինանսական հսկողությունը, հաշվառումը և հաշվետվությունը.

ընդունող Կողմ - պետություն, որի տարածքում անցկացվում է խաղաղության պահպանման գործողություն (այսուհետ՝ ԽՊԳ).

ուղարկող Կողմ - իր համակազմը ԽՊՀՈՒ-ի կազմին հատկացնող պետություն.

հաշվարկման-մատակարարման միավորներ - պայմանական միավորներ, որոնք կիրառվում են նյութական միջոցներով զորքերի (ուժերի) ապահովվածությունը, դրանց պահանջը և ծախսային նորմերի հաշվարկը որոշելիս.

ԽՊՀՈՒ-ի անձնակազմ - զինվորական, ոստիկանական և քաղաքացիական անձնակազմ, որից կազմավորվում է ԽՊԿՈՒ-ն.

ԽՊՀՈՒ-ի անձնակազմի շարժական գույք - ուղարկող Կողմի սեփականություն հանդիսացող հաստիքային (տաբելային) ռազմատեխնիկական գույք, ռազմական տեխնիկայի, սպառազինության բոլոր տեսակներ, ԽՊՀՈՒ-ի անձնակազմի գործելու համար անհրաժեշտ տրանսպորտային և այլ նյութատեխնիկական միջոցներ.

անշարժ գույք (անշարժ գույքի օբյեկտներ) - հողամասեր և դրանց վրա տեղակայված զորանոցներ ու բնակելի տարածքներ, կոմունալ շինություններ, զինվորական ձեռնարկություններ (հաստատություններ), մերձատար երկաթուղիներ, օդակայաններ, ուսումնական կենտրոններ ու հրաձգարաններ, կառավարման ստացիոնար կետեր և կապի հանգույցներ, ռադիոտեխնիկական և նավիգացիոն ապահովման ստացիոնար միջոցներ և ենթակառուցվածքի այլ օբյեկտներ, որոնք հանդիսանում են ընդունող Կողմի սեփականությունը և նրա համաձայնությամբ ենթակա են ԽՊՀՈՒ-ի ժամանակավոր օգտագործման:

Հոդված 2

ԽՊՀՈՒ-ի գործունեության և անձնակազմի ֆինանսավորումն իրականացվում է ուղարկող Կողմերի կողմից՝ սույն Համաձայնագրի Կողմերի որոշման և ԽՊԳ անցկացնելու մանդատի հիման վրա, այն ֆինանսական միջոցների շրջանակներում, որոնք ամեն տարի նախատեսվում են ազգային բյուջեներում համապատասխան նպատակների համար:

ԽՊՀՈՒ-ի գործունեության և անձնակազմի ֆինանսավորման համար կարող են օգտագործվել նաև Համագործակցության՝ ԽՊԳ-ում այլ ձևով մասնակցություն ունեցող մյուս մասնակից պետությունների միջոցները, ինչպես նաև միջազգային կազմակերպություններից ստացված միջոցները:

Հոդված 3

ԽՊՀՈՒ-ի գործունեության և անձնակազմի ֆինանսական ապահովումն

իրականացվում է սույն Համաձայնագրի Կողմերի համապատասխան որոշմամբ հաստատվող նորմերով:

Հոդված 4

ԽՊՀՈՒ-ի գործունեության հերթական ժամանակահատվածի և ԽՊԳ անցկացնելու ծախսերի պլանավորումը կատարվում է ԽՊՀՈՒ-ի միացյալ հրամանատարության կողմից:

ԽՊՀՈՒ-ի գործունեության և անձնակազմի ապահովման ծախսերի նախահաշիվների նախագծերը ներկայացվում են ԽՊԳ-ին մասնակցող պետությունների կառավարությունների դիտարկմանը՝ այդ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով հետագա հաստատման համար:

Հոդված 5

ԽՊՀՈՒ-ի կազմավորման մասին Կողմերի որոշման հիման վրա ԽՊՀՈՒ-ի միացյալ հրամանատարության համար ընդունող Կողմի պետական (ազգային) բանկում ժամանման պետության ազգային արժույթով կամ ազատ փոխարկելի արտարժույթով բացվում են հաշվարկային հաշիվներ ԽՊՀՈՒ-ի գործունեության և անձնակազմի ֆինանսական ապահովման համար:

Հոդված 6

ԽՊՀՈՒ-ի հրամանատարը պատասխանատու է ԽՊՀՈՒ-ի գործունեության և անձնակազմի ապահովման համար հատկացվող միջոցների բաշխման և նպատակային ծախսման համար և իրեն ենթակա ֆինանսական մարմնի միջոցով իրականացնում է ֆինանսական գործունեության ղեկավարումը:

ԽՊՀՈՒ-ի հրամանատարը ԽՊԳ-ն ֆինանսավորող պետություններին, ըստ ԽՊԳ-ն ավարտելու արդյունքների, ներկայացնում է դրամական միջոցների օգտագործման մասին տարեկան և եռամսյակային հաշվետվություններ, ինչպես նաև հաշվետվության այլ փաստաթղթեր՝ ըստ ծախսերի նախահաշիվների համապատասխան հոդվածների:

ԽՊՀՈՒ-ի գործունեության և անձնակազմի ապահովման համար հատկացված միջոցների նպատակային օգտագործման ընթացիկ հսկողությունն իրականացվում է սույն Համաձայնագրի Կողմերի որոշմամբ:

ԽՊՀՈՒ-ի ֆինանսատնտեսական գործունեության և միացյալ հրամանատարության վերստուգումը կատարվում է ԽՊԳ-ին մասնակցող պետությունների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի կողմից՝ առնվազն տարին մեկ անգամ, ինչպես նաև ԽՊԳ անցկացնելու մանդատի ավարտին, ԽՊՀՈՒ-ի հրամանատարի փոխվելու ժամանակ և այլ դեպքերում՝ ըստ սույն Համաձայնագրի Կողմերի որոշման:

Հոդված 7

ԽՊԳ նախապատրաստելու և անցկացնելու ժամանակ ԽՊՀՈՒ-ի գործունեության

և անձնակազմի ֆինանսական, տեխնիկական և թիկունքային ապահովման համակարգման համար ուղարկող Կողմերի և ընդունող Կողմի պաշտպանության նախարարություններում կառավարությունների ղեկավարների որոշմամբ ստեղծվում են ժամանակավոր օպերատիվ խմբեր, որոնք լուծում են հետևյալ խնդիրները.

օգնության ցուցաբերում ծրագրերի մշակման գործում՝ ըստ ապահովման տեսակների.

համագործակցության հարցերի մշակում և համաձայնեցում՝ ըստ ԽՊՀՈՒ-ի գործունեության և անձնակազմի տեխնիկական և թիկունքային ապահովման տեսակների.

վերահսկողություն որոշումները ժամանակին ընդունելու և ԽՊՀՈՒ-ի կազմում ազգային խաղաղարար ուժերի գործունեության ապահովման խնդիրները ենթակա զորամասերի և ստորաբաժանումների կողմից կատարվելու նկատմամբ.

ԽՊՀՈՒ-ի տեխնիկական և թիկունքային ապահովման մարմինների և ուղարկող Կողմի զինված ուժերի տեխնիկական և թիկունքային ապահովման մարմինների միջև անընդհատ կապի պահպանում, իրավիճակի մասին զեկույցների, տեխնիկական և թիկունքային ապահովման ծառայությունների և դրանց իրագործման վերաբերյալ ամփոփագրերի և հայտերի նախապատրաստում:

Հոդված 8

ԽՊՀՈՒ-ի գործունեության և անձնակազմի տեխնիկական և թիկունքային ապահովումն իրականացվում է ուղարկող Կողմերի կողմից կամ ԽՊԳ-ին այլ ձևով մասնակցող Համագործակցության մյուս մասնակից պետությունների կողմից:

Հոդված 9

ԽՊԳ նախապատրաստելու և անցկացնելու ընթացքում ԽՊՀՈՒ-ի ազգային համակազմերի ապահովումը սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով, նյութական միջոցներով և ռազմատեխնիկական գույքի այլ տեսակներով իրականացվում է անմիջականորեն ուղարկող Կողմերի կողմից:

Ընդ որում՝ ընդունող Կողմը պետք է նախապես տեղեկացված լինի ԽՊՀՈՒ-ի տրամադրության տակ ուղարկվող սպառազինության և ռազմական տեխնիկայի տեսակների և քանակի, ինչպես նաև բոլոր նյութական և այլ միջոցների մասին:

Հոդված 10

ԽՊՀՈՒ-ի գործունեության և անձնակազմի ապահովման համար տրամադրված սպառազինությունը, ռազմական տեխնիկան և նյութական միջոցների այլ տեսակները հանդիսանում են ուղարկող Կողմի սեփականությունը:

ԽՊՀՈՒ-ի սպառազինության և ռազմական տեխնիկայի, նյութական և այլ միջոցների կորստի, ինչպես նաև երրորդ անձանց կողմից զավթման դեպքերում ուղարկող Կողմը օպերատիվ կերպով տեղեկացնում է ընդունող Կողմին:

Սպառազինությանը, ռազմական տեխնիկային և նյութական միջոցների այլ տեսակներին հասցված նյութական վնասի որոշման կարգը սահմանվում է ԽՊՀՈՒ-ի հրամանատարի կողմից նշանակվող հանձնաժողովի կողմից՝ ուղարկող Կողմի

ազգային օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 11

ԽՊԳ անցկացնելու ժամանակ ընդունող Կողմը ԽՊՀՈՒ-ի անձնակազմի ժամանակավոր օգտագործմանն է տրամադրում իր սեփականությունը հանդիսացող անհրաժեշտ անշարժ գույքը (անշարժ գույքի օբյեկտները): Անշարժ գույքի վերակառուցումը, նոր օբյեկտների ստեղծումը, ինչպես նաև դրանց պահպանումը կատարվում են համապատասխան ԽՊԳ անցկացնելու համար հատկացված միջոցներից: ԽՊԳ ավարտին ամբողջ անշարժ գույքը, այդ թվում՝ վերակառուցվածը և նոր ստեղծվածը, փոխանցվում են ընդունող Կողմին՝ ըստ համապատասխան պայմանավորվածությունների:

Հոդված 12

ԱՊՀ մասնակից պետությունների տարածքներում ԽՊԳ նախապատրաստելու և անցկացնելու ընթացքում ԽՊՀՈՒ-ի գործունեության և անձնակազմի տեխնիկական և թիկունքային ապահովման պլանավորումն իրականացվում է ԽՊՀՈՒ-ի միացյալ հրամանատարության կողմից՝ ուղարկող և ընդունող Կողմերի լիազորված մարմինների հետ համատեղ:

ԽՊՀՈՒ-ի գործունեության և անձնակազմի ապահովման համար անհրաժեշտ նյութական միջոցների պահանջը որոշվում է՝ ելնելով դրանց կազմից, լուծվող խնդիրներից, գործողությունների ժամանակահատվածից, և հաշվարկվում է միասնական հաշվարկման-մատակարարման միավորներով:

Հոդված 13

ԽՊՀՈՒ-ի զինվորական համակազմերի տեղաշարժն իրականացվում է զինվորական անցագրերի հիման վրա: Զինվորական անցագրերի ձևակերպման, հանձնման, հաշվառման և օգտագործման կարգը կանոնակարգվում է ԱՊՀ շրջանակներում ընդունվող համապատասխան փաստաթղթերով:

ԽՊՀՈՒ-ի զինվորական համակազմերի գործունեության ապահովման համար անհրաժեշտ զինամթերքի, սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների տեղափոխումն իրականացվում է Հատուկ բեռների և ռազմական նշանակության արտադրանքի փոխադրումների մասին 1995 թվականի մայիսի 26-ի Համաձայնագրին համապատասխան:

Ընդունող և ուղարկող Կողմերի միջև վիզային ռեժիմի առկայության դեպքում ԽՊՀՈՒ-ի համակազմի տեղաշարժն ընդունող Կողմի պետական սահմանով իրականացվում է նշված Կողմերի միջև կնքված համապատասխան պայմանագրերի հիման վրա:

Հոդված 14

ԽՊՀՈՒ-ի գործունեության և անձնակազմի բժշկական ապահովումը կազմակերպվում է ԽՊՀՈՒ-ի միացյալ հրամանատարության կողմից և

իրականացվում է ուղարկող Կողմի բժշկական ծառայության ստորաբաժանումների կողմից:

Բժշկական ապահովման միջոցառումներն անցկացվում են ընդունող Կողմի բժշկական մարմինների հետ համագործակցությամբ և ներառում են բժշկական ծառայության միջոցների և ուժերի միավորման ստեղծումը, բուժական-կանխարգելիչ, սանիտարական-հակահամաճարակային (կանխարգելիչ) միջոցառումների անցկացումը, բժշկական գույքով և տեխնիկայով ապահովումը:

Ըստ Անհապաղ ցուցմունքների բժշկական օգնությունը (ներառյալ՝ որակավորված և մասնագիտացված) ցուցաբերվում է անհատույց հիմունքներով՝ ընդունող Կողմի բոլոր բժշկական հաստատություններում, ներառյալ անհրաժեշտ բոլոր լաբորատոր, գործիքային և այլ տեսակների բժշկական հետազոտությունների կատարումը:

Պլանային կարգով բժշկական օգնության ցուցաբերումն իրականացվում է ուղարկող Կողմի միջոցների հաշվին:

Հոդված 15

ԽՊՀՈՒ-ի գործունեության անասնաբուժական ապահովումը (անասնաբուժական-կանխարգելիչ, հակաանասնահամաճարակային և բուժական միջոցառումներ, անասնաբուժական-սանիտարական հսկողություն և վերահսկողություն) կազմակերպվում է ԽՊՀՈՒ-ի միացյալ հրամանատարության կողմից և իրականացվում է ԽՊՀՈՒ-ի անասնաբուժական ծառայության ուժերով ու միջոցներով և ընդունող Կողմի անասնաբուժական հաստատությունների կողմից:

Հոդված 16

ԽՊԳ նախապատրաստելու և անցկացնելու ժամանակ ընդունող Կողմը նախապես համաձայնեցված կարգով ապահովում է.

ԽՊՀՈՒ-ի տեղաբաշխումը և նրանց առաջադրված խնդիրների լուծման համար ենթակառուցվածքի անհրաժեշտ օբյեկտների անհատույց հիմունքով օգտագործման իրավունքի տրամադրումը.

ԽՊՀՈՒ-ի կողմից ռադիո, ռադիոռելեյական, ներքնոլորտային, արբանյակային կապի միջոցների և այլ ռադիոէլեկտրոնային միջոցների (ՌԷՄ) օգտագործման հետ կապված հարցերի համաձայնեցումը հեռախոսային, հեռագրային, ֆաքսիմալային և կապի այլ միջոցներով ապահովման համար: ԽՊՀՈՒ-ի ՌԷՄ աշխատանքի համար ռադիոհաճախականությունների շերտերը (նոմինալները) համաձայնեցվում են ԽՊՀՈՒ-ի և ընդունող Կողմի ռադիոհաճախականության մարմինների կողմից: Ընդունող Կողմի կողմից ԽՊՀՈՒ-ին տրամադրվող կապի ծառայությունների վճարումն իրականացվում է ընդունող Կողմի զինված ուժերի համար սահմանված սակագներով.

ուղղակի հարկերից և այլ տուրքերից ազատում ընդունող Կողմի տարածքում գտնվող տրանսպորտային հաղորդակցությունները և կառույցները ԽՊՀՈՒ-ի կողմից օգտագործվելու ժամանակ.

ընդունող Կողմի պաշտպանության նախարարության համար գործող սակագներով ԽՊՀՈՒ-ին տրանսպորտային հաղորդակցությունների և կառույցների

տրամադրում.

ԽՊԳ անցկացնելու ժամանակ ԽՊՀՈՒ-ի գործունեության իրականացման և դրանց անձնակազմի բնակվելու համար անհրաժեշտ շտաբ-կայանների, ճամբարների և ծառայությունների տեղակայման համար շինությունների և հողատարածքների անհատույց տրամադրում: Ընդ որում՝ շինությունները և հողատարածքները հանդիսանում են ընդունող Կողմի սեփականությունը.

ԽՊՀՈՒ-ի տեղաբաշխման վայրերում օբյեկտներին վառելիքաէներգետիկ պաշարների մատակարարում և կոմունալ-կենցաղային ծառայությունների մատուցում, ինչը վճարվում է ԽՊՀՈՒ-ի կողմից ընդունող Կողմի զինված ուժերի համար սահմանված սակագներով.

աջակցություն ԽՊՀՈՒ-ին տենդերային հիմունքներով նրանց կենսագործունեության համար անհրաժեշտ պարենը, մատակարարվող իրերը, այլ ապրանքները և ծառայությունները ձեռք բերելու գործում:

Հոդված 17

ԽՊՀՈՒ-ի գործունեության էկոլոգիական անվտանգության ապահովումն իրականացվում է էկոլոգիայի և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում համագործակցության մասին 1992 թվականի փետրվարի 8-ի Համաձայնագրին համապատասխան:

Հոդված 18

Սույն Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են Կողմերի միջև՝ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 19

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրի մեջ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով:

Արձանագրություններն ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 20-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 20

Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման և ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը այն ստորագրած Կողմերի կողմից կատարվելու մասին երրորդ ծանուցագիրն ավանդապահին հանձնելու ամսաթվից:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ծանուցագիրն ավանդապահին հանձնելու ամսաթվից:

Հոդված 21

Սույն Համաձայնագիրը բաց է Անկախ Պետությունների Համագործակցության այլ մասնակից պետությունների միանալու համար:

Միացող պետության համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին գրավոր ծանուցումն ավանդապահին հանձնելու ամսաթվից:

Հոդված 22

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ իր մտադրության մասին ավանդապահին գրավոր ծանուցում ուղարկելով ենթադրվող դուրս գալու ամսաթվից առնվազն վեց ամիս առաջ: Ավանդապահը մեկամսյա ժամկետում այդ մասին ծանուցում է Համաձայնագրի բոլոր մասնակիցներին: Ընդ որում՝ սույն Համաձայնագրից դուրս գալու ցանկություն հայտնած Կողմը պարտավոր է կատարել սույն Համաձայնագրով իր վրա վերցրած բոլոր պարտավորությունները, որոնք առկա են ավանդապահին ծանուցում ուղարկելու պահին:

Սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է, եթե դրանից դուրս գալու հետևանքով մնում են սույն Համաձայնագրին մասնակցող երեքից պակաս Կողմեր:

Կատարված է Դուշանբե քաղաքում 2007 թվականի հոկտեմբերի 5-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը դրա հաստատված պատճենը կուղարկի սույն Համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետության:

Սույն Համաձայնագիրն ստորագրվել է Հայաստանի Հանրապետության կողմից, Ռուսաստանի Դաշնության կողմից, Բելառուսի Հանրապետության (վերապահումով) կողմից, Տաջիկստանի Հանրապետության կողմից, Ղրղզստանի Հանրապետության կողմից,

Հայաստանի Հանրապետության համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2010թ. հունիսի 15-ին

Բելառուսի Հանրապետության վերապահումը

Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարների խորհրդի նիստի օրակարգի 10-րդ կետով

Անկախ Պետությունների Համագործակցությունում խաղաղության պահպանման հավաքական ուժերի գործունեության և անձնակազմի ֆինանսական, տեխնիկական և թիկունքային ապահովման կարգի մասին Համաձայնագրի մասին

2007 թվականի հոկտեմբերի 5 Ք. Դուշանբե

Անկախ Պետությունների Համագործակցությունում խաղաղության պահպանման հավաքական ուժերի գործունեության և անձնակազմի ֆինանսական, տեխնիկական և թիկունքային ապահովման կարգի մասին Համաձայնագրին կից

«Բելառուսի Հանրապետությունը ելնում է նրանից, որ ԽՊՀՈ-ի գործունեության և անձնակազմի ֆինանսական ապահովումն իրականացվում է Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարների խորհրդի՝ ԽՊՀՈ ստեղծելու մասին որոշման և ԽՊԳ անցկացնելու մանդատի հիման վրա իրենց զինվորական կազմավորումները, ոստիկանական և քաղաքացիական անձնակազմը ԽՊԳ համար հատկացնող Կողմերի ազգային բյուջեների միջոցների հաշվին»:

Ստորագրվել է Բելառուսի Հանրապետության Նախագահ Ա. Լուկաշենկոյի կողմից: